ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Իրավագիտության և տնտեսագիտության մագիստրոս, ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի օգնական

ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հիմնաբառեր. *անբարեխիղճ մրցակցություն, հասարակության մոլորեցում, համբավի վնասում, գործունեության վարկաբեկում, չբացահայտված տեղեկատվություն*

Հոդվածում քննարկվում են անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունում առկա բացթողումները:

Առաջարկվում է Օրենքում ամրագրել անբարեխիղճ մրցակցության այլ գործողություններ էլ (14-րդ հոդվածում ավելացնել նոր՝ երրորդ մասով, ինչպես նաև 15[1] հոդվածով), իսկ իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու համար՝ պատժամիջոցի խստացում:

ՀՀ տնտեսության մենաշնորհացման և ապրանքային շուկաներում համակենտրոնացման բարձր մակարդակները, անբարեխիղճ մրցակցության տարբեր դրսևորումները էապես խոչընդոտում են երկրի զարգացումն ու ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացումը: Չնայած տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգի շուրջ 17 տարվա գոյությանը, տնտեսության մենաշնորհացման և ապրանքային շուկաներում համակենտրոնացման մակարդակները շարունակում են բարձր մնալ, իսկ անբարեխիղճ մրցակցության զանազան դրսևորումները, անբարեխիղճ գովազդը որոշակի տնտեսավարողների համար դարձել են կենսակերպ: Պատճառը մի կողմից՝ մրցակցության պաշտպանության օրենսդրության «բացերն» են, մյուս կողմից՝ երկրի տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգի ոչ արդյունավետ գործունեությունը:

Տնտեսական վերափոխումների ներկա փուլում անհրաժեշտություն են դարձել տնտեսական մրցակցության պաշտպանության նոր մոտեցումների մշակումը, համաշխարհային լավագույն փորձի տեղայնացումը, ինչպես նաև տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումն ու լուծումները:

ՀՀ մրցակցության պաշտպանության օրենսդրությունում առկա են անբարեխիղճ մրցակցության վերաբերյալ վիճելի պնդումներ և բացթողումներ, որոնց ճշգրտմանը կանդրադառնանք սույն հոդվածում:

Նախ՝ «անբարեխիղճ մրցակցություն» եզրույթի վերաբերյալ: Այն միջազգային իրավական փորձում առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել 1883 թվականին՝ «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» փարիզյան համաձայնագրում՝ ըստ որի անբարեխիղճ մրցակցության ակտ է ամեն մի գործողություն, որը հակասում է արդյունաբերական ու առևտրական գործերում արդար սովորություններին[1]: Փաստորեն, փարիզյան կոնվենցիայում անբարեխիղճ մրցակցությունը դիտարկվում է արդյունաբերական սեփականության պահպանության համակարգի շրջանակում: Հիմք ընդունելով փարիզյան կոնվենցիան՝ 1896 թվականին Գերմանիայում[2] (մայիսի 27-ին, որը փոխարինվեց 1909 թվականի հոկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած օրենքով), Շվեցարիայում (դեկտեմբերի 19-ին) ընդունվեցին անբարեխիղճ մրցակցության կարգավորման մասին օրենքներ: Նշված իրավական ակտերում առկա են «անբարեխիղճ մրցակցություն» հասկացության անորոշություններ և ոչ ամբողջականություն, որը գործնականում առանձին դեպքերում հանգեցրել է ոչ ճիշտ մեկնաբանության: Համաշխարհային փորձում անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է, համարվում է իրավունքի չարաշահում, իսկ նման գործողություն թույլ տված սուբյեկտը՝ պատժվում: Մ.Վ. Զալեսկայայի կարծիքով, արտասահմանյան օրենսդրության մեջ անբարեխիղճ մրցակցության հասկացության անորոշությունները և ոչ հստակությունը փոխհատուցվում են բազմամյա դատական փորձով, որը ձևավորվել է մրցակցության գործընթացում տնտեսավարող սուբյեկտների գործողությունների գնահատման հաստատված մոտեցումներով[3]:

Հարկ է նշել, որ տնտեսագիտական և իրավագիտական գրականության մեջ միանշանակ չի մեկնաբանվում «անբարեխիղճ մրցակցություն» եզրույթը: Մասնավորապես, ըստ Ռադչենկոյի՝ ՌԴ քաղաքացիական օրենսգրքում նշված ոչ բոլոր գործողություններն են իրավունքի չարաշահում[4]:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է Օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները (հոդված 11)[5]: Թվարկած սկզբունքներն ավելի տարողունակ են, քան Օրենքում ներկայացված անբարեխիղճ մրցակցության դրսևորման գործողությունները (հոդվածներ 12–16): Օրինակ՝ ՌԴ-ն Մրցակցության պաշտպանության մա-

---

[1] «Փարիզյան համաձայնագիր, Արդյունաբերական սեփականության պահպանության մասին 1883 թվականի մարտի 20», ՀՀ ԱԳՆ, ՊՏ, 2004.12.20/5(13), ՀՀ-ում ուժի մեջ է մտել 25.12.1991:

[2] Закон ФРГ «о недобросовестной конкуренции», Конкурент, 0, 09/1995, с. 40.

[3] Конкурентное право Российской Федерации: Уч. Пособие для вузов / Н.В.Васильева, Ю.Ю.Горячева, Н.Г. Доронона и др.; Под ред. Н.И. Клейн, Н.Е. Фонаревой. – М.: Логос, 1999, с. 83.

[4] Радченко С.Д. Злоупотребление правом в гражданском праве России. М., 2010, с. 91.

[5] «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, http://competition.am/index.php?menu=147&lng=1

սին օրենքի 14.3 հոդվածում (Սխալ համեմատությամբ անբարեխիղճ մրցակցությունը)[1] առկա է անբարեխիղճ մրցակցության դրսևորման ձև, որը ներառված չէ ՀՀ օրենքում: Իսկ ՌԴ նույն օրենքի 14.8 հոդվածով փորձ է արված դուրս չթողնել անբարեխիղճ մրցակցության դրսևորման ոչ մի ձև (Անբարեխիղճ մրցակցության այլ ձևերի արգելումը)[2]:

Համալրվել են նաև Ղազախստանի Հանրապետության օրենսդրությունում անբարեխիղճ մրցակցության գործողությունները[3], որոնցով փորձ է արվել ընդգրկել անբարեխիղճ մրցակցության այլ դրսևորումները:

Մեր կարծիքով, վերոհիշյալ օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունները հստակեցրել են անբարեխիղճ մրցակցության եզրույթին վերագրվող գործողությունները:

Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Օրենքում ևս առկա են համապատասխան բացթողումներ՝ առաջարկում ենք դրանում կատարել ներքոհիշյալ լրացումներն ու ճշգրտումները:

Օրենքի 14-րդ հոդվածում ավելացնել երրորդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Արգելվում է տնտեսավարող սուբյեկտի կամ նրա ապրանքի անբարեխիղճ մրցակցությանը բնորոշ անվայելուչ համեմատությունը ուրիշ (մրցակից) տնտեսավարող սուբյեկտի և (կամ) նրա ապրանքի հետ, այդ թվում ՝

1) համեմատելով այլ տնտեսավարող մրցակից սուբյեկտի և (կամ) դրա ապրանքի հետ՝ օգտագործելով «լավագույն», «առաջին», «թիվ մեկ», «առավել», «միայն», «եզակի», և այլ բառերը կամ նշանները, որոնք կարող են մրցակից սուբյեկտների և (կամ) նրանց ապրանքների նկատմամբ գերազանցության տպավորություն ստեղծել, առանց նշելու օբյեկտիվորեն հավաստող համեմատության որոշակի բնութագրիչ կամ պարամետր, կամ այն դեպքերում, եթե այդ պնդումները չեն համապատասխանում իրականությանը, անարժանահավատ են կամ խեղաթյուրված,

2) ուրիշ մրցակից տնտեսավարող սուբյեկտի և (կամ) դրա ապրանքի հետ համեմատությունը, որում չկան որոշակի բնութագրիչներ կամ պարամետրեր, կամ համեմատության արդյունքները չեն կարող օբյեկտիվորեն ստուգվել,

3) ուրիշ մրցակից տնտեսավարող սուբյեկտի և (կամ) դրա ապրանքների հետ համեմատությունը, որը բացառապես հիմնված է աննշան կամ անհամատեղելի փաստերի

---

[1] Федеральный закон от 26.07.2006 N 135-ФЗ (ред. от 29.07.2017) "О защите конкуренции", http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=221428&fld=134&dst=752,0&rnd=0.31413761745262225#0»: Օրենքի 1-ին մասի 3-րդ ենթակետը խմբագրվել է, ներկայացվել, 14.3 հոդվածով և ուժի մեջ է մտել: Տե՛ս О внесении изменений в Федеральный закон "О защите конкуренции" и отдельные законодательные акты Российской Федерации (с изменениями на 5 октября 2015 года), http://docs.cntd.ru/document/420287108

[2] 14.8 հոդվածը լրացվել է 05.10.2015 թ. ՌԴ օրենքում կատարված լրացումով՝ О внесении изменений в Федеральный закон "О защите конкуренции" и отдельные законодательные акты Российской Федерации (с изменениями на 5 октября 2015 года), http://docs.cntd.ru/document/420306040

[3] Кодекс Республики Казахстан от 29 октября 2015 года № 375-V ЗРК (с изменениями и дополнениями по состоянию на 03.07.2017 г.), http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=80123

վրա և բացասական գնահատական է պարունակում մրցակից տնտեսավարող սուբյեկտի և (կամ) նրա ապրանքի վերաբերյալ:

Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15[1] հոդվածով.

«Հոդված 15[1]. Անբարեխիղճ մրցակցության այլ գործողությունների արգելումը

1. Ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որով.
   1) կոչի կամ այլ ձևով բոյկոտվում է մրցակից վաճառողը (մատակարարը),
   2) գնորդին (մատակարարին) խտրականության կոչ է արվում,
   3) մրցակցի հետ պայմանագիր կնքելու կամ գործողը խզելու կոչ է արվում,
   4) վաճառողի (մատակարարի) կամ գնորդի աշխատողին կաշառելը,
   5) կատարվում կամ դրսևորվում են անբարեխիղճ մրցակցության այլ գործողություններ ու վարքագիծ»:

Նշված լրացումների շնորհիվ կհստակեցվեն անբարեխիղճ մրցակցության գործողությունները, որը հնարավորություն կտա բարելավելու Օրենքը և վերացնելու դրանում սահմանված պատժամիջոցներում առկա անորոշությունները: Մասնավորապես՝ դեռևս 04.05.2005 թվականի Օրենքում կատարված փոփոխություններով 36-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությամբ պատժամիջոցը խստացվել է նույն խախտումը տնտեսվարող սուբյեկտի կողմից մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում[1]: Իսկ նման դեպքերը գործնականում շատ են: Օրինակ՝ 2009 թվականին «Ալեքս Գրիգ» ՍՊԸ-ն 4 անգամ կատարել է Օրենքի 12-րդ հոդվածով (Տնտեսավարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելը) սահմանված իրավախախտումը (տե՛ս Հանձնաժողովի 22.04.2009 թվականի թիվ 48-Ա որոշում, 05.11.2009 թվականի թիվ 82-Ա-ից 84-Ա որոշումներ): Նույն սուբյեկտի կողմից նմանատիպ 5 խախտում էլ արձանագրվել է Հանձնաժողովի՝ 2010 թվականի մայիսի 19-ի (թիվ 56-Ա-ից 60-Ա որոշումներ), 2 խախտում՝ 2010 թվականի օգոստոսի 4-ի (Որոշումներ 181-Ա և 182-Ա)[2] դռնբաց նիստերում:

Տնտեսավարողների իրավախախտումները մասամբ էլ պայմանավորված են Օրենքում կատարված չհիմնավորված փոփոխություններով: Մասնավորապես՝ 36-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված փոփոխությամբ իրավախախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու համար սահմանված առավել խիստ պատժամիջոցի դրույթը օրենսդիրը 12.04.2011 թվականի փոփոխությամբ հանել է (06.05.2011 թ. ՀՕ-137-Ն): Մեր կարծիքով, անհրաժեշտ է Օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասը անհրաժեշտ է լրացնել հետևյալ պարբերությամբ. «Սույն մասով նախատեսված իրավախախտումը մեկ տարվա ընթաց-

---

[1] 31.05.2005 թ . ՀՕ-91, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2296&lang=arm

[2] http://competition.am/uploads/resources/vor_arm_2009_04_048.pdf,
http://competition.am/uploads/resources/vor_arm_2009_10_084_pdf.pdf,
http://competition.am/uploads/resources/vor_arm_2010_05_59.pdf,
http://competition.am/uploads/resources/vor_arm_2010_05_58.pdf,
http://competition.am/uploads/resources/vor_arm_2010_05_57.pdf,
http://competition.am/uploads/resources/vor_arm_2010_05_56.pdf,

քում կրկին կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նախորդող տարվա հասույթի մեկ տոկոսի չափով, բայց ոչ պակաս երկու միլիոն դրամից»:

Այսպիսով՝ Օրենքում առկա որոշ բացթողումներ խթանում են առանձին տնտեսավարողների կողմից շարունակական իրավախախտումների կատարումը:

МИКАЕЛ МИКАЕЛЯН,
ВАРАЗДАТ МИКАЕЛЯН

К ВОПРОСУ ЗАКОНОДАТЕЛЬНОГО УРЕГУЛИРОВАНИЯ НЕДОБРОСОВЕСТНОЙ КОНКУРЕНЦИИ

Ключевые слова: *недобросовестная конкуренция, ввести в заблуждение общественость, потеря репутации, дискредитирование деятельности, нераскрытая информация*

В статье рассматриваются те пробелы, имеющиехся в законе Республики Армения «О защите экономической конкуренции» (далее - Закон), которые способствуют допущению частых правонарушений в форме недобросовестной конкуренции со стороны отдельних субъектов рынка.

Авторами статьи предлагаются некоторые дополения и изменения в Законе, которые должны устранить почву правонарушений недобросовестной конкуренци в Республике Армения. В частости, закрепить в Законе и другие действия недобросовестной конкуренции (в 14-й статье добавить новую часть третьей, а также статьей 15[1]), а при повторном правонарушении в течение одного года - ужесточение санкций.

MIKAYEL MIKAYELYAN,
VARAZDAT MIKAELYAN

ON THE ISSUE OF LEGISLATIVE REGULATION OF UNFAIR COMPETITION

Key words: *unfair competition, mislead the public, loss of reputation, discrediting activities, undisclosed information*

The article considers those gaps in the Law of the Republic of Armenia "On the Protection of Economic Competition" (hereinafter referred to as the Law), which contribute to the admission of frequent offenses in the form of unfair competition on the part of individual market subjects.

The authors of the article offer some additions and changes to the Law that will eliminate the ground for the violation of unfair competition in the Republic of Armenia. In particular, the Law secure and other acts of unfair competition (14-th article to add a new part three and article 15[1]), while a second offense within one year - the tightening of sanctions.